**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 5**
**22.11.2022Թ. ԿՆՔՎԱԾ N ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան «16» փետրվարի 2024թ.

Ջրային կոմիտեն, ի դեմս Կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Ղազարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) և մի կողմից <<Մոդուլ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 2103-Ն որոշման 3-րդ կետի 3)-րդ ենթակետը, ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2323-Ն որոշումը և 22.11.2022թ. կնքված N ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրով նախատեսված ՀՀ Գեղարքունիքի մարզում Արգիճի և Աստղաձոր, ՀՀ Վայոց ձորի մարզում Ելփինի և ՀՀ Արմավիրի մարզի Քասախի ջրամբարների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման 2024 թվականին շարունակելու համար սահմանել համապատասխանաբար.

ա) ՀՀ Գեղարքունիքի մարզում Արգիճի և Աստղաձոր ջրամբարների կառուցման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների համար 139 350 000 (մեկ հարյուր երեսունինը միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում Արգիճի ջրամբարի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ՝ 69 675 000 (վաթսունինը միլիոն վեց հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ և ՀՀ Գեղարքունիքի մարզում Աստղաձոր ջրամբարի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ՝ 69 675 000 (վաթսունինը միլիոն վեց հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ:

բ) ՀՀ Արմավիրի մարզի Քասախի և ՀՀ Վայոց ձորի մարզում Ելփինի ջրամբարների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների համար համապատասխանաբար՝ 87 000 000 (ութսունյոթ միլիոն) ՀՀ դրամ և 78 000 000 (յոթանասունութ միլիոն) ՀՀ դրամ:

1.2 Աշխատանքների կատարման համար տրամադրել նոր ժամկետ՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Արգիճի ջրամբարի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների համար 12 ամիս՝ աշխատանքների կատարման ժամկետի սկիզբը սահմանելով 2024 թվականի սեպտեմբերի 1-ը: Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Աստղաձոր ջրամբարի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների համար 5 ամիս, որի հաշվարկն իրականացվում է 2024 թվականին սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից:

1.3 Պայմանագրի Հավելված N 2-ով սահմանված վճարման ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն սույն համաձայնագրի Հավելված N 1-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Համաձայնագրը գործում է մինչև կողմերի կողմից սույն համաձայնագրով և Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011038610
ՀՎՀՀ 02555816
գլխավոր քարտուղար

Ա. ՂԱԶԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Մոդուլ» ՍՊԸ
Ք. Երևան, Ն.Զարյան 22, տարածք 3
էլ. հասցե info@modul.am
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կոմիտաս մ/ճ
Հ/Հ 11500404281400
ՀՎՀՀ 05020542
հեռ. 011201511
Տնօրեն

Ն. ՀԱԿՈԲՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«22» նոյեմբերի 2022թ.
N ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն գնման պայմանագրի
«16» փետրվարի 2024թ.
կնքված Համաձայնագիր 5-ի
««22» նոյեմբերի 2022թ. կնքված N ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն գնման պայմանագրի Հավելված 2-ի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
## 2024թ.

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | |
| | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71241200/1 | Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - ՀՀ Գեղարքունիքի մարզում Արգիճի և Աստղաձոր ջրամբարների կառուցման | | | | | | | | 69 675 000 | 69 675 000 | 69 675 000 | 69 675 000 | 139 350 000 |
| | | | | | 27 870 000 | 69 675 000 | 69 675 000 | 69 675 000 | 69 675 000 | 69 675 000 | 69 675 000 | 69 675 000 | 69 675 000 | |
| 2 | 71241200/2 | Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - ՀՀ Արմավիրի մարզի Քասախի ջրամբարների կառուցման | 34 800 000 | 87 000 000 | 87 000 000 | 87 000 000 | 87 000 000 | 87 000 000 | 87 000 000 | 87 000 000 | 87 000 000 | 87 000 000 | 87 000 000 | 87 000 000 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | 71241200/3 | Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - ՀՀ Վայոց ձորի մարզում Ելփինի ջրամբարների կառուցման | 31 200 000 | 78 000 000 | 78 000 000 | 78 000 000 | 78 000 000 | 78 000 000 | 78 000 000 | 78 000 000 | 78 000 000 | 78 000 000 | 78 000 000 | 78 000 000 |
| | Ընդամենը | | 66 000 000 | 165 000 000 | 192 870 000 | 234 675 000 | 234 675 000 | 234 675 000 | 234 675 000 | 304 350 000 | 304 350 000 | 304 350 000 | 304 350 000 | 304 350 000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով»*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011038610
ՀՎՀՀ 02555816
գլխավոր քարտուղար

Ա. ՂԱԶԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Մոդուլ» ՍՊԸ
Ք. Երևան, Ն.Զարյան 22, տարածք 3
էլ. հասցե info@modul.am
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կոմիտաս մ/ճ
Հ/Հ 11500404281400
ՀՎՀՀ 05020542
հեռ. 011201511
Տնօրեն

Ն. ՀԱԿՈԲՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.